ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/12-15311-Հ «21» 03 2014 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր՝ 19.03.2014 թ.հ.213-ի 8 գրության՝ Մեդիալաբ լրատվական-վերլուծական կայքի լրագրողի կողմից ներկայացված հարցերի վերաբերյալ, տեղեկացնում ենք.

1. Երևան քաղաքի ենթակայությամբ ներկայումս գործում է թվով 159 մանկապարտեզ:
2. Երևանի քաղաքապետի 31.03.2011 թվականի հ.1101-Ա որոշմամբ Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզներում նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար, որը հանդիսանում է ընտանիքների սոցիալական խնդրների լուծման աջակցություն:
3.Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզներ հաճախում է 32183 երեխա:
4.Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզներում նախադպրոցական կրթությունն անվճար դառնալուց հետո հաճախող երեխաների թիվն աճել է շուրջ 9 000-ով:
5. Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզներում հաշվառված /հերթագրված/ երեխաների թիվը շուրջ 6 000 է:
6.Երեխաների սահմանված կարգով արտահերթ ընդունելությունը մանկապարտեզում հնարավոր է տարիքային խմբերում ազատ տեղ լինելու դեպքում:
7.Ձեզ ենք տրամադրում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի հ.29–Ն հրամանով սահմանող խմբերի խտության չափորոշչի վերաբերյալ իրավական ակտը:
8.Երևանի քաղաքապետի 31.03.2011 թվականի հ.1101-Ա որոշմամբ երեխան նախապես պետք է հաշվառվի /հերթագրվի/ հաստատության «Երեխաների հերթագրման և ընդունման» մատյանում:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ